

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ հունվարի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Տեղ համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 22 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր հինգ, պատերազմի հասցրած վնասի փոխհատուցման երկու, աշխատանքի ընդունման, աշխատանքի վերականգնման, դպրոցի ջեռուցման, բնակարանով ապահովելու, բնակարանի գազաֆիկացման, քրոջ զոհված երեխայի հիշատակին նվիրված հուշաղբյուր կառուցելու, ՄՈԲ-ով պատերազմին մասնակցելու և չվճարվելու, վիրահատությունը պետպատվերով իրականացնելու և կնոջը աշխատանքի տեղավորման, մոզիների առք ու վաճառքի հետ կապված խնդրի, վարձակալական հողի տրամադրման, իր տարածքին համայնքի կոյուղու հասցրած վնասի, տան նվիրատվության, հնագիտական թանգարանին աջակցելու, հողի սեփականաշնորհման և այլ արտոնություններից օգտվելու, տանիքի վերանորոգման՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երկուսին տրվել է դրական լուծում, երեք դիմում գտնվում են ուսումնասիրման փուլում

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են պատերազմի հասցրած վնասի փոխհատուցման, աշխատանքի ընդունման, աշխատանքի վերականգնման, դպրոցի ջեռուցման, բնակարանով ապահովելու, բնակարանի գազաֆիկացման, քրոջ զոհված երեխայի հիշատակին նվիրված հուշաղբյուր կառուցելու, ՄՈԲ-ով պատերազմին մասնակցելու և չվճարվելու, վիրահատությունը պետպատվերով իրականացնելու և կնոջը աշխատանքի տեղավորման, մոզիների առք ու վաճառքի հետ կապված խնդրի, վարձակալական հողի տրամադրման, իր տարածքին համայնքի կոյուղու հասցրած վնասի, տան նվիրատվության, հնագիտական թանգարանին աջակցելու, հողի սեփականաշնորհման և այլ արտոնություններից օգտվելու, տանիքի վերանորոգման վերաբերյալ դիմումները: